# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 11 >> դեկտեմբերի 2018թ. N 169

ք. Արմավիր

**<<ՄԵԾԱՄՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՄԻՔԱՅԵԼ ՎԱՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 156-րդ, 159-րդ հոդվածներով, 161-րդ հոդվածի երկրորդ մասով, 163-րդ, 164-րդ հոդվածներով և 169-րդ հոդվածի երկրորդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշմամբ սահմանված N 1 հավելվածի 19-րդ կետով և հիմք ընդունելով <<Մեծամորի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Միքայել Վանյանի 2018 թվականի նոյեմբերի 30-ի դիմումը.

**կ ա ր գ ա դ ր ու մ ե մ՝**

1. <<Մեծամորի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Միքայել Վանյանին տրամադրել 2017-2018 աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդի չօգտագործած մասը՝ 2018 թվականի դեկտեմբերի 28-ից 2019 թվականի հունվարի 24-ը ներառյալ՝ 14 աշխատանքային, 5 տոնական և 1 հիշատակի օր տևողությամբ:
2. Միքայել Վանյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում գործադիր տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել <<Մեծամորի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի բուժական գծով տեղակալ Պավել Մկրտչյանին:
3. Միքայել Վանյանին աշխատանքի մեջ համարել 2019 թվականի հունվարի 25-ից:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 11.12.2018 17:28:17 GMT+4

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

**Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**